

ՊԵՐԱՆԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ քերականագիտության պատմության սկիզբը դրվել է հույն քերական Ղիոնիսիոս Թրակացու (մ.թ.ա. 2-րդ դ.) «Արվեստ քերականի» աշխատության հայերեն թարգմանությամբ (5-րդ դ.):

Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Հույն քերականագետները շատ ավելի զբաղված էին գործնական-բանասիրական և զուգահեռաբար տրամաբանական-իմաստասիրական հիմունքների նշանակմամբ: Հայտնի է նաև, որ թե հունական, թե նրա հետևությամբ հայ քերականագիտությունը խոսքի մասերի տարբերակման ու սրանց բնութագրման հարցում միակարծիք չի եղել»¹:

Թրակացին և նրա հայերեն մեկնիչները չէին կարող որդեգրել խոսքի մասերի սահմանման միասնական սկզբունքներ, քանի որ «խոսքի մաս» ասելով հասկանում էին թե՛ բառատեսակ, թե նախադասության անդամ²:

5-րդ դարից սկսած, հատկապես հետագա դարերի հայ քերականները դերանունն ընդունում էին որպես առանձին խոսքի մաս՝ այն անվանելով նաև «քերանուն» կամ «փոխանուն»³:

Սեզանում Թրակացու աշխատության հանգամանալից քննությունը կատարվել է Գ. Ջահուկյանի առանձին մեկնազրության մեջ: Գ. Ջահուկյանը բազմաթիվ փաստերով ցույց է տվել, որ հայ թարգմանիչները «հատակորեն» չեն ընդօրինակել հունարեն բնագրերը, կատարել են, ըստ էության, ոչ թե սոսկ թարգմանություն, այլ փոխադրություն:

Հատկապես պետք է նկատի ունենալ, որ տվյալ աշխատության մեջ «բառ» և «խոսքի մաս» հասկացությունները պարզապես նույնացվել են:

Պերանվան սահմանման մեջ, օրինակ, ընդգծվել են «անվան փոխարինող» լինելու և ապա «դեմք ցույց տվող բառի գործառնությունները»:

Թրակացու քերականության գործնական հիմունքները հայ քերականագետների կողմից հավելվել էին ռացիոնալիստական հայեցակետերով: Այսպես Պավիթ Քերականը ներկայացնում է *բառի* և *բանի* նոր ըմբռումը, որը փաստորեն խոսքի մասերի տրամաբանական վերլուծության հիմք է ծառայում:

Բավական ինքնատիպ և նոր մոտեցում է ի հայտ բերում Պավիթը դերանուն խոսքի մասը սահմանելիս: Այս դեպքում դիմադին հատկանիշը պարզապես չի ընդունվում որպես էական հատկանիշ: Քերականն անուն խոսքի մասին փոխարինելու դերանվան հատկանիշներին ավելացնում է ևս երկուսը՝ **քերականություն և փոխանունություն**:

Ինչպես հույն քերականագիտության մեջ, այնպես էլ Թրակացու քերականության հայերեն մեկնություններում դերանունը գերազանցապես դիտարկ-

¹ Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե. 1954, էջ 21:

² Գ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 8:

³ Վ. Արևելցի, Սեկնություն քերականի, Եր., 1972, էջ 136:

վել է որպես «անվան փոխարինող և նրան դիմային լրացում հանդիսացող խոսքի մաս»⁴: Այդպիսով՝ դերանունը բնութագրվել է գերազանցապես *փոխարինիչ* դերով:

Հետագա դարերում քերականական աշխատանքները աչքի չեն ընկել «տեսական կարևոր նորություններով»⁵: Դերանվան խոսքի մասի քերականական, ձևախմբատային հատկանիշների վերլուծության առումով քիչ բան կարելի է գտնել 17–19–րդ դարերի հայերեն քերականություններում, որոնք Գ. Ջահուկյանի ճշգրիտ բնութագրմամբ՝ դասակարգվում են երկու՝ **լատինաատիպ** և **ինքնուրույն** շրջանների: Հարցի խորքային և մանրակրկիտ բնության դեպքում ակնհայտ է դառնում, որ այս կամ այն հետազոտողը նաև այս շրջանում, դերանվան իմաստային խմբերի մեջ ինքնատիպ մոտեցում է դրսևորում: Այսպես, օրինակ՝ ավանդաբար առանձնացված երեք դերանվանական խմբերին (անձնական, հարաբերական, ստացական) Ֆ. Ռիվոլան ավելացնում է նաև ցուցականը: Եիշտ է, հետագայում, ինչպես նկատել են շատերը (իմտ. Գ. Ջահուկյան, Գ. Բարսեղյան և այլք) «անձնականներն ու ցուցականները սահմանազատելիս սրանք շփոթում են իրար՝ **ինքն** համարում է ցուցական, **սա, դա** նույնպես ցուցական, **իսկ նա՝** անձնական դերանուններ»⁶: Այսպիսով՝ Ֆ. Ռիվոլան այնքան էլ հեռու չի գնում Քոմենցու դասակարգման հիմքերից:

Կ. Գալանոսի աշխատանքներում անուն խոսքի մասի մեջ են մտցված նաև որոշյալ, անորոշ և ժխտական դերանունները: Հայերենագիտության մեջ ժամանակին բննադատության է արժանացել դերանուն խոսքի մասի տեսակներն ըստ կազմության քննելու ժամանակ Կ. Գալանոսի դրսևորած անհետևողականությունը: Այսպես, օրինակ՝ **ոմն, իմն, ինչ** դերանվանային ձևերը տարաբնույթ մեկնաբանության են ենթարկվել⁷:

Հովհաննես (Հոլով) Կոստանդնուպոլսեցու քերականությունը Ոսկան երևանցու պես պատկանում է լատինատիպ ազգիոնալիստական քերականության շրջանին: Ինչպես Ռ. Երևանցին, Գ. Հոլովը հողը առանձին խոսքի մաս չի դիտում: Նրա քերականության մեջ ոչ միայն բացակայում է հայերենի դերանվան խոսքի մասի ամբողջական համակարգային նկարագիրը, որը միանգամայն բնական է, այլև ինչպես նշվել է հայերենագիտության մեջ, մի շարք հարցերում հեղինակն անգամ նահանջել է արդեն ձեռք բերած դիրքերից: Այսպես, օրինակ՝ մեկ «դերանուն», մեկ «մասնական անուն» է համարում **ոմն, ոք, իմն** անորոշ դերանունները:

Հետագայում Սիմեոն Տուրայեցու «Գիրք որ կոչի քերականութիւն» երկում (Կ. Պոլիս, 1725 թ.) հողը դարձյալ ավանդաբար դիտվել է իբրև առանձին խոսքի մաս: Ընդ որում հող են համարվել նաև **այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն**, ցուցական դերանունները:

¹ Տես Գ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 55:

² Գմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 20:

³ Գ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 68:

⁴ Լույն տեղում, էջ 72:

⁵ Լույն տեղում, էջ 80:

Լատինատիպ քերականություններից է Յոհան Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատությունը (Ամստերդամ, 1711 թ.): 3. Շրյոդերը նախորդ շրջանի բոլոր քերականագետներից շատ հեռու է գնացել: Նախ նա տարբերակել է դերանունների երկու տեսակ՝ 1. ինքնուրույն կամ անջատ (separatum) և 2. ածանց դերանուններ (affixum): Կարելի է ասել, որ դերանվան շրյոդերյան դասակարգումը՝ իր ութ տեսակներով՝ 1. անձնական, 2. ցուցական, 3. ստացական, 4. հարաբերական, 5. հարցական, 6. անորոշ, 7. ազգական (իմային, մերային, քոյին, ձերային, իւրային) և 8. անդրադարձ, ըստ էության, ներկայացրել է հին հայերենի դերանվան հարաբերականորեն ամբողջական պատկերը (նկատի ունենք, որ հետագայում այդ դասակարգման սխեման ենթարկվել է միայն մասնակի լրացումների և աննշան ճշգրտումների):

Մխիթար Սեբաստացին իր քերականագիտական հայացքներով ինչ—որ չափով ազդվել է նախորդ շրջանների հունաբան, այլև լատինաբան քերականներից: Նա նույնպես, ինչպես Ո. Երևանցին և Գ. Դոլովը, հողը միացնում է դերանուններին բնութագրելով դրանք իբրև «դերանուն դիմորոշականք»⁹:

Ինչպես նախորդ քերականներից շատերը, Պաղղասար Դպիրը նույնպես դերանունը բնութագրել է իր փոխարինման գործառույթով: Դարձյալ հողը առանձին խոսքի մաս չդիտելով հանդերձ այն ներկայացրել է որպես դերանվան առանձին տեսակ:

Դերանվան խոսքի մասի տեսությունը իր հետագա զարգացումն է ստացել 18—19-րդ դարերի ինքնուրույն քերականություններում: Այս շրջանում հայ քերականագիտությունը վերջապես լիովին ձերբազատվում է հունալատինաբան քերականությունների ոչ միայն արհեստականորեն «մուծված» ավանդույթներից, այլև փորձեր է անում գիտականորեն կայունացնել դերանվան խոսքի մասի ըմբռնումը:

Մ. Չամչյանը իր «Քերականութիւն հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1779 թ.) աշխատության մեջ **եական** (իմա՝ անձնական) դերանունների շարքին է դասել նաև **միմեանց** և **իրերաց** փոխադարձ դերանունները: Գաբրիել Ավետիքյանն, ի տարբերություն Միքայել Չամչյանի, իր «Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ և կարգաւ» (Վենետիկ, 1815 թ.) աշխատության մեջ ս, դ, ն հողերն այլևս չի համարում դերանվան տեսակ: «Սրանք,— գրում է պրոֆ. Գ. Բարսեղյանը,— քննում է դերանուններից հետո առանձին վերնագրով և բացատրում է որպես բառերի վերջից ավելացող գրեր, որոնք եական (անձնական), ստացական և ցուցական դերանունների նման բառին դեմքի կամ կարգի իմաստ են վերագրում»¹⁰:

19-րդ դարի կեսի խոշորագույն լեզվաբաններից մեկը Արսեն Բագրատունին է, որն իրավամբ հայ քերականագիտության մեջ **ինքնատիպ քերականություն** ստեղծելու բարձրակետն է Մ. Չամչյանից և Գ. Ավետիքյանից հետո:

Ա. Բագրատունու «Հայերն քերականութիւն ի պէտս գարգացելոց» աշխատության մեջ (Վենետիկ, 1852 թ.) դերանունները սահմանվում են որպես կարգ կամ դեմք ցույց տվող, ինչպես նաև, բնականաբար, անուն խոսքի մասին փո-

⁹ Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբանի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730 թ.:

¹⁰ Գ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 123:

խարհինոգ գործառույթյամբ բնորոշվող բառերի շարքեր. Ըստ այդմ, նա առանձնացրել է **գոյական** դերանունի (էական) և ածական դերանունի խմբեր: Գոյական դերանունի խմբի մեջ են դասվել **ես, դու, ինքն, իւր** (հոգնակիներով) անձնական դերանունները, **սա, դա, նա** ցուցական և հարաբերական **որ** դերանունը: Ածական դերանունների շարքին են դասվել **այս, այդ, այն, սույն, դոյն, նոյն** ցուցականները և **իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, մերային** ստացականները:

Դերանվան խոսքի մասի ավանդական տեսության նվաճումները լավագույնս ամփոփվում են վաստակաշատ լեզվաբան Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ (1866 թ., Վիեննա): Այդ աշխատանքում դերանուն խոսքի մասի մեջ արդեն մտցվել են ցուցական, անձնական և ստացական դերանունները, ինչպես նաև **որ** հարաբերականը: Ա. Այտընյանը հատկապես շեշտել է, որ քերականագետների աշխատություններում դերանվան ըմբռնման մեջ կան բավականին տարակարծություններ. «Կան քերականներ, — գրել է Ա. Այտընյանը, — որ ածական դերանունները դերանվան կարգին չեն դնել, այլ ցուցական, ածական կամ ստացական ածական անվամբ ածականներու մեջ կը դասեն» (ն.տ., էջ 34):

Ա. Այտընյանը դերանվան խոսքի մեջ չմտցված **այսպես, այդպես, այնպես** բառերը դիտել է իբրև դերանվանական մակբայներ:

Փաստորեն ավանդական քերականագիտության մեջ դերանուն, իբրև խոսքի մաս, փոխարինման գործառույթով սահմանափակվելը Ա. Այտընյանի մոտեցմամբ բնութագրվել է իբրև խիստ պակասավոր, քանի որ ըստ նրա՝ դերանունը, անունների փոխարինիչ հատկանիշից բացի, բնորոշվում է նաև դիմային հարաբերություն ցույց տալու հատկանիշով:

Նա գրել է. «Դերանուն կ'ըսուի երկրորդ մասն, քանի որ գոյական անունը շատ անգամ չկրկնելու համար անոր տեղը կը դրուի»:

Թեև Ա. Այտընյանը դերանունը դիտել է իբրև գոյականի փոխարեն գործածվող խոսքի մաս, սակայն նա փորձում է բացատրել դերանվան որպես խոսքի մասի առանձնահատկությունները:

Նա ցույց է տվել դերանունների մի էական գիծ, որը կարևոր ներդրում է դերանունների ճիշտ ճանաչման հարցում¹¹:

Ա. Այտընյանը գրել է. «Գոյականի կամ անուան և դերանուան իրարմէ տարբերութիւնն այն է, որ գոյականը բանին անունը կու տայ՝ առանց յայտնելու, թէ որն է, իսկ դերանունը կը ցուցանէ, թէ որն է, առանց անունը ցույց տալու»¹²:

Նոր և հատկապես նորագույն շրջանի քերականագիտական աշխատություններում դերանվան խոսքամասային տարբերակումը թևակոխում է մի նոր փուլ: Այդ շրջանի հայ քերականագետներից Ատ. Պալասանյանը իր «Քերականութիւն մայրենի լեզուի» (1874 թ.) աշխատության մեջ խոսքի մասերի իմաստային, տրամաբանական դասակարգման համակարգում տեսական հիմք է ընդունում «նրանց բառային նշանակությունները»¹³: Ատ. Պալասանյանը ինչպես դերբայի, շարկապի, այնպես էլ դերանվան սահմանումը տալիս է

¹¹ Ա. Գ. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956, էջ 69:

¹² Ա. Այտընյան, նշվ. աշխ.

¹³ Գ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 158:

հետևելով ավանդական սկզբունքին՝ առանցքային տեղում դնելով շարահյուսական քերականության գործառնությունը:

Ըստ այդմ «Այն բառերը, որոնք գոյական և ածական անունների տեղ են դրվում, կոչվում են **դերանուն**» (Ստ. Պալասանյան, ն.տ., էջ 70): Նորագույն քերականագետների կողմից «միջակա անունք» կոչված բառերի շարքը Ստ. Պալասանյանը մտցրեց «անորոշ դերանուններ» խմբի մեջ, որոնք 20–րդ դարի 30–ական թթ. խմբավորվեցին անորոշ, որոշյալ, փոխադարձ և ժխտական դերանվանական տիպերի միջև: Պալասանյանի ավանդը հայ դերանվանագիտության մեջ ճշգրիտ բնութագրում է ստացել Զ. Բարսեղյանի կողմից. «Պալասանյանը առաջին հայ քերականն է, որի աշխատություններում հայերենի դերանունները ներկայացվում են անհամեմատ լրիվ տեսակավորմամբ և բառացանկով»¹⁴: Այդուհանդերձ, Ստ. Պալասանյանի նվաճումներն ըստ էության կրկնությունն են այն մոտեցումների, որոնք ժամանակին տեղ են գտել օտար անվանի հայագետների՝ Յ. Շրյոդերի, Զ. Պետերմանի և այլոց քերականագիտական աշխատություններում:

Դերանվան խոսքի մասի և առհասարակ հայերենի խոսքի մասերի իմաստաբանական–շարահյուսական դասակարգումը պատկանում է Մ. Աբեղյանին:

Անվերապահորեն պետք է շեշտել, որ Մ. Աբեղյանով հայ լեզվաբանությունը թևակոխել է գիտական աննախընթաց բարձր փուլ՝ յուրացնելով ընդհանուր լեզվաբանության ձեռքբերումները (էջ 164):

«Աշխարհաբարի քերականության» մեջ Մ. Աբեղյանը գոյականի «ներսում» անունն ու դերանունը անջատել է իրարից իմաստային հակադրությամբ (հաստատուն նշանակության բառեր – փոփոխական նշանակության բառեր)¹⁵:

Ըստ Մ. Աբեղյանի՝ նույն բառը հանդես գալով տարբեր պաշտոններում՝ ձեռք է բերում տարբեր բառերի արժեք, ուստի մեծամուն լեզվաբանը զգուշացնում է «Չպիտի շփոթել ի՞նչ հարցական անունը և ի՞նչ անորոշ անունը, որոնք գոյական են և մենակ են գործածվում ի՞նչ հարցական մականվան հետ, որ իբրև ածական դրվում է անվան վրա»¹⁶: Եթե «Աշխարհաբար քերականություն» աշխատության մեջ Մ. Աբեղյանը ընդունում է իբրև գոյական դերանուն **ձևը**, ապա «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ «Անուն և դերանուն անվանումները ավելի լայն բովանդակություն են ստանում»¹⁷: «Աշխարհաբար շարահյուսության» մեջ Մ. Աբեղյանը գոյական, ածական և մակբայ բառատեսակները բաժանում է երկու խմբի՝ **անվան և դերանվան**:

Դերանունը նյութական նշանակության մյուս խոսքի մասերի վրա բաշխելու իր մոտեցմամբ Աբեղյանը մնում է իր դասակարգման սկզբունքներին խիստ հետևողական:

Ըստ նրա՝ դերանունները հաստատուն նշանակություն չունեցող բառեր են, որով և հակադրվում են անուններին: Բայց այդ հատկանիշը նրանց համար խոսքամասային կամ բառատեսակային տարբերակիչ հատկանիշ չէ, քանի որ

¹⁴ Նույն տեղում, էջ 162:

¹⁵ Նույն տեղում, էջ 170:

¹⁶ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, 1912, էջ 61:

¹⁷ Զ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 175:

անուն և դերանուն կոչված բառախմբերը ոչ իրենց նյութական նշանակությամբ, ոչ էլ իրենց շարահյուսական հիմնական կիրառմամբ մի ամբողջություն կամ ընդհանրություն չեն ներկայացնում:

Մ. Աբեղյանը իր աշխատություններում դերանունների նկատմամբ տարբեր մոտեցում է դրսևորել: Նա սկզբում դերանունն ընդունել է իբրև առանձին խոսքի մաս (մեծ չափերով սահմանափակելով նրա ծավալը), իսկ հետագայում, ավելի հետևողական լինելով իր հայեցակետի մեջ, դերանունն իբրև խոսքի մաս, իսպառ վերացրեց: Այդպես է Մ. Աբեղյանը վարվել «Աշխարհաբարի քերականություն» և «Հայոց լեզվի տեսություն» աշխատություններում. ճանաչել է դերանվան չորս տեսակ՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարաբերական:

Գ. Աճառյանը տարբեր լեզուների դերանունների քննության հիման վրա եկել է այն եզրակացության, որ դերանունները նախապես զոյականներ էին, որոնք հետո գործածության մեջ շարունակ մաշվելով՝ դարձան կրճատ, անձանաչելի բառեր՝ դերանուններ:

«Դերանունը նյութական նշանակությունից զուրկ է: Աշխարհի միլիոնավոր բնակիչներ կարող են ասել **ես**, և այս բառը կարող է նշանակել այդքան մարդ»,— ասել է Գ. Աճառյանը: Ըստ այդմ՝ դերանունը ամբողջապես **անորոշություն** է և որևէ կապակցությամբ կարող է միայն նշանակել այսինչ առարկան: Այդ նշանակում է, որ դերանունը, որպես խոսքի մաս, նախապես ճանաչվել է իր **փոխարինման** գործառույթով»:

Դերանվան խոսքամասային առանձնահատկության մասին Գ. Սևակի որդեգրած տեսակետը հետևյալն է. «Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա, հատկանիշ, թիվ և թվական կարգ, առանց տարբերակման՝ իբրև նրանց ընդհանուր անուն»:

Դերանվան ընդհանուր իմաստ ունենալը հայտնի էր գիտությանը, բայց եթե անցյալում, այդ հատկանիշն ունենալով հանդերձ, դերանունը առանձին խոսքի մաս չէին համարում, ապա Գ. Սևակը դերանունը համարում է առանձին խոսքի մաս:

Գ. Սևակը ցույց է տվել, որ դերանունների հարաբերակից խոսքի մասերը ունեն **տարբերակված** իմաստ, համդիսանում են առարկաների կամ հատկանիշների անուններ, մինչդեռ դերանունները չեն անվանում առարկան կամ հատկանիշը, նրանք ունեն առարկայի կամ հատկանիշի **ընդհանուր, չտարբերակված** իմաստ:

Հայերենի խոսքի մասերի իմացաբանական դասակարգում են կատարել Ա. Ղարիբյանը և հատկապես Գ. Սևակը: Ա. Ղարիբյանը իր դպրոցական դասագրքում դերանունը բնորոշում է իբրև «առարկա, որպիսություն, թիվ և գործողության հանգամանքներ ընդհանրապես» ցույց տվող խոսքի մաս¹⁶: Այսպիսով դերանունը «դադարում է միայն անունների (զոյականի, ածականի, թվականի) հարաբերական խոսքի մաս լինելուց և իր մեջ է առնում նաև մակբայական դերանունները»¹⁷:

¹⁶ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1961, էջ 234:

¹⁷ Գ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 201:

Այսպիսով անցյալի քերականները դերանունների մի մասն այլ խոսքի մասերի մեջ են մտցրել ոչ միայն նրանց փոխարինման գործառույթով բնորոշվելու պատճառով (այդպիսի հատկություն բազմաթիվ օրինակներով ցույց է տվել Ս. Աբրահամյանը «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ) ունեն ոչ միայն դերանունները, այլև ուրիշ խոսքի մասեր ու լեզվական միավորներ:

Դերանունը որպես խոսքի մաս, ինչպես և դերանվան շատ տեսակներ համարյա նույնն են թե՛ գրաբարում, թե՛ ժամանակակից հայերենում:

Աշխարհաբարի քերականներն արդի հայերենի դերանունների սահմանման և դերանվանական տեսակների դասակարգման ժամանակ հաշվի են առել նաև գրաբարյան դերանունների առանձնահատկությունները:

Ինչպես երևաց վերոհիշյալից, անցյալի լեզվաբանները դերանունը մասնատում էին գոյականների, ածականների և մակբայների միջև:

Իրոք, իմաստային տեսակետից որոշ-հարաբերություն կա դերանվան և գոյականի, ածականի, թվականի, մակբայի միջև: Սակայն դրանց միջև կան նաև էական տարբերություններ: Այդ տարբերությունները հայ իրականության մեջ հանգամանորեն քննարկել է Գ. Սևակը իր «խոսքի մասի ուսմունքը», «ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (Երևան, 1955 թ.) աշխատությունների մեջ:

Չայ լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ խոսքի մասերի կադապարային դասակարգումը կատարել է Գ. Ջահուկյանը: «խոսքի մասերի կադապարային դասակարգումը,— գրել է Գ. Ջահուկյանը,— բառային միավորների խմբավորումն է ըստ նախադասություն կազմող և լրացնող կադապարների մեջ նրանց գրաված որոշակի դիրքերի (բաշխման): Որքան մեզ հայտնի է, խոսքի մասերի կադապարային դասակարգման սկզբունքը լեզվաբանության մեջ որպես այդպիսին հստակորեն ձևակերպվում է առաջին անգամ»:

Ըստ կադապարային բաշխման առանձնացված խմբերը հիմնականում գործառական բնույթի են: Դերանունները, բնականաբար, քննարկվում են որպես հաղորդման տարրեր կապված լինելով հաղորդակցային և կոնտեքստային իրադրության հետ: Ըստ այդմ դերանունները ծառայում են հաղորդման տարրերը սրանց հետ հարաբերելուն, լրացուցիչ կերպով ցույց են տալիս մասնակիցների հատկություններն ըստ հաղորդակիցների դիրքի և այլն: Սիանգամայն ճիշտ է նկատում Գ. Ջահուկյանը, որ ավելի բարդ է դերանվան բնույթի հարցը: Սիա թե ինչ է գրել նա. «Չայերենում, ըստ կադապարային դասակարգման, կունենանք տասնվեց խոսքի մաս՝ յոթ «լիմաստ» (որպես նախադասության անդամ հանդես եկող)՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, մակլրացական, հինգ կապահարաբերական՝ կապ, ստորական, համական, առկապ, բառ մասնիկ, և չորս եղանակավորող՝ ձայնարկություն, իմացարկություն, եղանակ(ակ)ան, երանգական»:

Ներկայացնելով խոսքի մասերի կադապարային դասակարգման ընդհանուր պատկերը՝ Գ. Ջահուկյանը եզրակացնում է. «Չարկավոր է կանգ առնել դերանվան վրա, որի էությունն է համարվում այլ խոսքի մասերին փոխարինելը: Իրականում կարելի է նշել, որ փոխարկական գործառությունը (հմմտ. միմյանց և այլն) բոլոր դերանունների էությունը չէ. կարելի է խոսել անունների (մակբայների) և շատ դերանունների փոխադարձ փոխարկելիության մասին»:

ըստ առարկաների նշանային, թե իրադրական տարբերակման պահանջի: Դերանունների խոսքիմասային դիրքը որոշելիս հնարավոր է երկու մոտեցում կամ դրանք բաշխել թվականների, ածականների, գոյականների ու մակբայների վրա և տարբերակել ըստ իրադրականության ու փոխարկայնության, կամ, նկատի առնելով, որ դերանունների գործառական մի տեսակը («դերանվանական ածականը») ինքնուրույնաբար հանդես է գալիս գոյականական չափույթի մեջ որպես բաղադրիչ, դրա հիման վրա այն տարբերել որպես խոսքի մաս և մյուս դեպքերը քննել ըստ փոխանցման և փոխարկման:

Ըստ կաղապարային մոտեցման մենք ընտրել ենք երկրորդ ուղին: Սեր «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում նշված են հետևյալ հիմնական «դերանվանական ածականները» («դերանվանական որոշիչները»)²⁰ ինչ, որ, այդ, այն, նույն, այլ, ուրիշ, բոլոր, (ամբողջ, ամեն, մի: Սրանցից առաջին երկուսը, գոյականանալով և հաղորդակցային իրադրությունից անցնելով կոնտեքստային իրադրության, հանդես են գալիս որպես հարաբերական դերանուններ, այսինքն՝ կաղապարի մեջ գրավում են շաղկապների տեղը (որ շարժվեր դեպի այդ երկու բազմամարդ քաղաքները...): Հարցական և ցուցական տեսակները համապատասխան գործառական մասնիկներով, հոդառությամբ և փոխարկմամբ կարող են հանդես գալ գոյականի, ածականի, թվականի, մակբայի, մակրոացականի կաղապարային դիրքերում (հմտ. այսքան գեղեցիկ տներ, այսպիսի տներ, այս (=սա), այսպես քայլում է, այսքան արագ քայլում է և այլն):

Ոչ դերանվանական որոշիչների գոյականացումը մյուս խոսքի մասերի համեմատությամբ ունի որոշ առանձնահատկություններ. հմտ. ի՞նչը, ո՞րը, այս (=սա), այդ (=դա), այն (=նա), նույնը ուրիշը, բոլորը, ամբ(ողջ), ամենքը, մեկը (ավելացնենք մյուսը, որի օգնությամբ կկազմվեն փոխադարձ դերանունները՝ մեկը մյուսին, միմյանց, իրար): Գոյականականայն այս, այդ, դերանունները կարող են փոխարկվել սա, դա, նա և սրանք, դրանք, նրանք դերանուններով. անձնական դերանունները կարող են դիտվել իբրև սրանց փոխարինական տարբերակները»²⁰:

Ըստ էության, Գ.Զահուկյանի մշակած կաղապարային դասակարգմամբ դերանուն խոսքի մասը ստանում է սպառիչ բնութագիր և հիմք կարող է ծառայել լեզվաբանական մոր հետազոտությունների, մանավանդ գուգադրական-տիպաբանական քննության ասպարեզում:

Խոսքի մասերի (ներառյալ դերանունների) դասակարգումը հայոց լեզվի նյութի հաշվառմամբ դեռևս հստակորեն չի իրագործվել իմաստաբանական, շարահյուսական և կիրառական հայեցակետերով:

Ընդ որում հարցի գիտական քննությունը սպառիչ դարձնելու համար և, մանավանդ ցեղակից լեզուների գուգադրությամբ հայոց լեզվի դերանուն խոսքի մասին տիպաբանական առանձնահատկությունների վերհանումը արդի հայերենագիտության կարևոր խնդիրներից է:

²⁰ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի տեսության հիմունքներ, «Համազգային» իրատարակություն:

Լ. Պետրոսյան

ПОНЯТИЕ МЕСТОИМЕНИЙ В АРМЯНСКОЙ ГРАММАТИЧЕСКОЙ МЫСЛИ

Статья посвящена местоимениям армянского языка. В статье представлена история развития армянской лингвистической мысли. Рассматриваются взгляды лингвистов, начиная с толкователей Дионисия Фракийского до наших дней.

Представлены виды, методы и проявления этой части речи. Дается характеристика классификации и описание местоименной системы как части речи.

Прослеживается влияние европейской лингвистической мысли и развитие различных тенденций в армянской лингвистической мысли.

L. Petrosyan

PRONOUNS IN ARMENIAN LINGUISTICS

The article is devoted to the Armenian Pronouns. The history of Armenian linguistics is expressed in the article. The viewpoints of the linguistics are touched upon starting from Dionysus Thracacy.

Types, methods and expressions of that part of speech are given in this article.

Classification characteristics and the explanation of the pronominal system as a part of speech are displayed.

The author reveals the impact of the European linguistics and the development of various tendencies in the Armenian linguistics.